Սուղդաննա նուաճեց խաղաղութեամբ. Թիրշանշահին[1] նա պարտաւորեցրեց տարեկան 10.000 ֆունտ Բաբ մատակարարել։ Ապա Մրբվան բանակեցաւ Լակզի իշխանի բերդի հանդէպ, որ հրաժարեցաւ նորան հարկ տալ եւ գնաց պտրելու խաղաբաց թագաւորին, սակայն սպանեցաւ նետով մի հովիւից, որ նորան չճանաչեց։ Այն ժամանակ Մրբվան խաղաղութիւն հաստատեց լակզի բնակչաց հետ եւ դրեց նոցա վերայ մի կառավարիչ, իսկ ինքն գնաց Շարուան բերդը, ծովի ափին, որ նորան հպատակեցաւ, այնտեղից Ծովդէք, որի ժողովրդի հետ նա պատերազմեցաւ եւ ապա վերադարձաւ։

117 Թ. Մրբվան ի. Մուհամեդ, Հայաստանի կառավարիչը, ուղարկեց երկու զօրագունդ, որոնցից մէկը նուաճեց Ալաններից երեք բերդ, իսկ միւսը բանակեցաւ Ցումանշահի երկրում, որի ժողովուրդը նորա հետ խաղաղութիւն հաստատեց։

118 Թ. Մրբվան ի. Մուհամեդ արշաւեց Հայաստանից եւ մտաւ Ուռնիսի[1] երկիրը երեք կիրճերից. Ուռնիս փախաւ խաղաբաց մօտ եւ մտաւ մի ամրոց, որ Մրբվան պաշարեց, դնելով նորա առջեւ մաջանիք։ Ուռնիս սպանեցաւ. սպանողը ուղարկեց նորա գլուխը Մրբվանին, որ ցոյց տուեց այն ամրոցաբնակներին. սոքա անձնատուր եղան նորա դատաստանին. Մրբվան սպանել տուեց ռազմիկներին, իսկ կանանց գերի տարաւ։

119 Թ. Մրբվան ի. Մուհամեդ արշաւեց Հայաստանից եւ մտաւ Ալանաց երկիրը, այնտեղից չուեց գնաց խաղաբաց երկիրը. անցնելով Բալան-

---

5 Բելազորի (տե՛ս վերեւ)՝ Թարարսարանշահ։ Ընդ. յայտ։

1 Թուի թէ Աղուանից երկրում։